ՍՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴԱՊԵՏ ՂԱԼԱՄԵԱՆ ՏՐԹԻՐՋԻ.

Հանգեալ ի Տէր.

Հանգուցեալը ձեռնադրուել է Արեղայ ի միաբանակցութիւն Տաթևու վանից, և զանազան պաշտօնավարութեամբ՝ Հոգ. իշխանու թեան համարումը միշտ վայելել է և վարձատրուել է վարպետական ականակուռ լանջական խաչով ու ծաղկեայ փիլոնով։

Հանգուցեալը բաց ի Տաթևու վանքի վանահայրութիւնից և նոյն վիճակի յաջորդութիւնից՝ Մայր Աթոռումն վարել է զանազան պաշտօններ, վանահայր է եղել նաև Արգեազու Ս. Խաչ վանից։ Անցեալ 1886 թուին Տաթևու յաջորդութիւնից արձակուելով՝ եկաւ Մայր Աթոռս և տարւոյս սկզբից կարգուեց Վանական Կառավարութեան անդամ։ Աւելի քան մի ամիս նկատելի կերպով մաշվումէր լեարդի և կրծքային հիւանդութեամբ և ամսոյս 20/9 մահիճ մտնելով ամսոյս 25ին, շաբաթ՝ լոյս կիւրակէ գիշերը 11 ժամին կնքեց մահկանացուն ի հասակի վաթսուն ամաց, և պատշաճաւոր յուղարկաւորութեամբ ամփոփուեց Մայր Աթոռոյս միաբանութեան գերեզմանոցում։

Հանգիստ և երկնից արքայութիւն ենք մաղթում Հանգուցելոյն և Սուրբ Հոգւոյ մխիթարութիւն վշտագնեալ սրտերին։